

Համաձայնեցված է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Վ. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱ ՊԵԿ ՆԱԽԱԳԱՀ
Գ. Խաչատրյան

16 ապրիլ 2012 թ.

06 ապրիլ 2012 թ. N 14

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Ջ Ա Բ Ա Ն ՈՒ Մ N 14

ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 1-ԻՑ ՀՄԿԻԶ-ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՅՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի համաձայն «մինչև սույն հոդվածի «դ» կետով նախատեսված ժամկետները կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը յուրաքանչյուր ամսվա առաջին հինգ աշխատանքային օրվա ընթացքում իրենց հաշվառման հարկային մարմին են ներկայացնում նախորդ ամսվա ընթացքում յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ձևով»:

Հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ձևը սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկության ձևը հաստատելու մասին» N 511-Ն որոշմամբ:

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ 2012 թվականի ապրիլի 1-ի դրությամբ գործող խմբագրության, 4-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ Օրենքի 5-8-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում Օրենքի N 7 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող արտոնագրային վճար վճարողների նկատմամբ:

Հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունների ներկայացման հետ կապված որոշ հարցերի վերաբերյալ պարզաբանումներ տրված են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի օգոստոսի 16-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի կիրառման վերաբերյալ՝ N 35 պաշտոնական պարզաբանմամբ:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածով՝ ***պաշտոնապես պարզաբանում եմ.***

1. 2012 թվականի ապրիլ ամսվանից սկսած Օրենքի N 7 հավելվածով սահմանված գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարողները «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի համաձայն ներկայացնում են տեղեկություն նախորդ ամսվա ընթացքում յուրաքանչյուր հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացված դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ: Հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացրած դրամական հաշվարկների վերաբերյալ տեղեկությունները ներկայացվում են Հայաստանի

Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի N 511-Ն որոշմամբ հաստատված ձևով:

2. Օրենքի N 7 հավելվածով սահմանված գործունեություն իրականացնող արտոնագրային վճար վճարողների նկատմամբ կիրառելի են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի օգոստոսի 16-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի կիրառման վերաբերյալ» N 35 պաշտոնական պարզաբանման դրույթները, բացառությամբ այդ պաշտոնական պարզաբանման 2-րդ կետի 5-րդ ենթակետի:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2011 թվականի օգոստոսի 16-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «ե» կետի կիրառման վերաբերյալ» N 35 պաշտոնական պարզաբանման 2-րդ կետի 5-րդ ենթակետը վերաբերում է Օրենքի N 1 և N 2 հավելվածով սահմանված գործունեության տեսակներ իրականացնող արտոնագրային վճար վճարող համարվող անհատ ձեռնարկատերերին: